

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՁՆԵՑՈՒ ԵՐԿԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԾՎԱԾ ԵՎ «ՆՈՐ
ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ
ՉՎԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ

ՎԱՐՄԻԿ ՆԵՐՄԻՍՅԱՆ

Հովհաննես Իմաստասեր Օձնեցու երկերում կան նորակազմ բազմաթիվ բառեր¹, որոնք տեղ են գտել Վենետիկի Մխիթարյան Հայրերի կազմած «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» աշխատության մեջ²: Դրանց մի մասը գործածվել է միայն Օձնեցու, իսկ մյուս մասը՝ նաև հետադա հեղինակների երկերում: Հովհ. Օձնեցու երկերում որոշակի քանակ են կազմում նաև այն բառերը (մոտավորապես 63 բառային միավոր), որոնք ուշադրության չեն արժանացել ՆՀԲ-ի հեղինակների կողմից:

1. Այս առումով ուշադրավ է «Յովհաննու Իմաստասիրի, Հայոց կաթողիկոսի, խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնալոյ Բանին Քրիստոսի, եւ ընդգէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս» ճառը³, որում տեղ են գտել գրեթե 28 նորակազմ բառեր, որոնք վկայակոչված չեն ՆՀԲ-ում: Դրանք են՝ անձրևահոս, ախտաթէսեմ, աշխարհափրկիչ, աստուածասիրաբար, աւետարանութիւն, գիշերամած, դրէմլտիւ, թանձրագիտակ, ինքնաբարբառ, ծաղկանետեալ, հակասակ, հրաբորբ, մահորոճ, մարմնազգեստեալ, յախեալ, յարելաբար, յոգնահոս, Նեստորաբար, նոյնացեալ, ոչ ստորաքննել, չարահագագ, վայրագարկեցան, վերապայծառ, վերջատանջեմ, տարասութիւնք, տրտմաբեր, քերթողածաղիկ, օրածին:

Ստորև առանձին-առանձին ներկայացնենք վերոնշյալ բառերը՝ տալով դրանց բառակազմական բնութագիրը:

Անձրևահոս բառը նշանակում է «անձրևաբեր»⁴: Ահա բառի գործածությունը բնագրում. «... և ոչ զաստուածային շնորհացն բազմապատիկ պարզևս և զմեծ և զփրկական զխորհուրդն յինքեանս նախապատուորեն ըստ զեղմանն անձրևահոս ցողոյ, որ ոտողեցան զանպտղութիւն մարգկան ի կռապաշտիցն երաշտութենէ՝ բողբոջեալ բուրեն ընդհանրական եկեղեցւոյ» (էջ 192):

¹ Վ. Ն ե Ր ս ի ս յ ա ն. Նոր բառեր և իմաստային կիրառութիւններ Հովհաննես Օձնեցու երկերում. «Գիտական հոդվածների ժողովածու», Գավառ, 2002, էջ 112-118:

² Գ. Ա Լ Ե տ ի ք Ե ա ն, Խ. Մ ի Լ ր մ է լ Ե ա ն, Մ. Ա Լ Գ Ե ր Ե ա ն. Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. I-II, Վենետիկ, 1836-1837:

³ «Արարատ», 1896, ապրիլ, էջ 192-199:

⁴ Տե՛ս Հ ո վ հ ա ն ն Ե ս Օ ձ ն Ե ց ի. Երկեր, գրաբարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի, Երևան, 1999, էջ 307, ծան. 3 (այսուհետև՝ ՀՕԵ):

Բառը կազմված է անձրև⁵ փոխառյալ բառից (ենթադրվում է, որ այն փոխառվել է գենգերենից՝ Ավեսաայի լեզվից) և հոս (ՀԱԲ, III, Երևան, 1972, 114) գեոևս չստուգաբանված արմատից:

Ախտաթէտեմ բառը նշանակում է «ցավազար լինել, հիվանդանալ, ախտանալ» (ՀՕԵ, 308, ծան. 29): Բառի գործածությունը բնագրում. «Եւ որք ի բանս ապիրատս ախտաթէտեն՝ թէ աստուածային բնութիւն, որ էր հաւասար Հօր, առանձնակի թլփատեցաւ և կամ անկատար երբէք ի կատարելութենէ եղև» (193):

Բառը կազմված է սլահլավերեն *axt* «հոռի, տգեղ, հիվանդ» բառից (ՀԱԲ, I, 100) և ժէտ նույնպես սլահլավական, անհայտ նշանակութեամբ արմատից (ՀԱԲ, Երևան, 1973, II, 228): Աճառյանը բերում է միայն հետևյալ օրինակները՝ ախտաթէտ վկայակոչելով Ս. Գիրքը, և ախտաթէտութիւն վկայակոչելով Մանգակունուն (V գ.), իսկ վերոհիշյալ բայաձևը նա էի հիշատակում:

Աշխարհափրկիչ բառը, որ նշանակում է «աշխարհը փրկող» (ՀՕԵ, 308, ծան. 26), գործածվել է հետևյալ նախադասութեան մեջ՝ «Զի նոքա նմանութեամբ իմն ասեն և ստուերական հանգամանօք և կարծեօք երևել աշխարհի զաշխարհափրկիչն Քրիստոս (193): Բառը կազմված է հին պարսկերեն «թագավոր» իմաստով աշխարհ արմատից (ՀԱԲ, I, 218) և փրկ չստուգաբանված արմատից:

Աստուածասիրաբար բառը նշանակում է «ինչպես որ Աստծուն է սիրում, աստվածասեր լինելու չափ» (ՀՕԵ, 310, ծան. 66). «Այսպէս ես զայս սակաւութիւն ինչ ձեզ հարկեցայ գրել զի մի լուութեամբ տրտմեցուցից զձեզ. աղաչեմ զի աստուածասիրաբար բարեկամութեամբ և իմաստակիր մտաւորութեամբ ընկալիք զառ ի յինէն ասացեալսդ» (199): Բառը ձևավորվել է հնդեվրոպական ծագում ունեցող Աստուած արմատից⁶, չնայած որոշ հեղինակներ, այդ թվում և Աճառյանը, այն համարում են օտար ծագում ունեցող արմատ (ՀԱԲ, I, 278), և սեր հնդեվրոպական ծագումով *ke'r* «աճել, սնուցանել» արմատից (ՀԱԲ, IV, Երևան, 1979, 204)՝ բաղադրված -բար անցանքով:

Աւետարանութիւն «ավետում, ավետելը, ավետարանելը» (ՀՕԵ, 310, ծան. 63) նշանակութեամբ բառն ունի այսպիսի գործածություն. «Այսպէս և համարձակախօսն Եսայեսս յաթոռ բարձրութեան և վերացելոյ զՈրգի տեսանէ նստեալ և նմա սրովբէագոչ ձայնն գերեքսրբեանն ազգակեալ սրբասացութիւնս ըստ որդւոյն Որոտման Յովհաննու աւետարանութեանն» (198): Բառը կազմված է աւետ «բարի լուր» նշանակութեամբ բառից, որի ծագումը ստույգ է (ՀԱԲ, I, 358)՝ -արան, -ութիւն անցանքով:

Գիշերամած նշանակում է «մութ, մթամած գիշերվա նման խավար» (ՀՕԵ, 308, ծան. 20). «Այլ ընդգիմասցուք նոցա ուզգափառ հաւատոց մարտիւ և սանձահարեալ հանգիսասցուք զխստերախ խարգաւանս հերձուածողութեան և վերջատանջել զյոզնահոս և զբազմատարած գիշերա-

⁵ Հ. ր. Ա. ճ. ա. յ. ն. Հայերենի արմատական բառարան, հ. I, Երևան, 1971, էջ 204, (այսուհետև՝ ՀԱԲ. հատորը և էջը կնշվեն տեքստում՝ մեջբերումներին կից):

⁶ Տե՛ս Վ. Հ. ա. մ. բ. ր. ձ. ո. մ. յ. ն. Հայերեն աստված բառի ծագումն ու ստուգաբանությունը. Երևան, 2002, էջ 31:

մածն խաւար» (193): Բառը կազմված է բնիկ հայերեն դիշեր (ՀԱԲ, I, 559) և մած «կպած, կից, իրար միացած», նաև «խիտ, հոծ, թանձր» (ՀԱԲ, III, 228) արմատներից:

Դրէմխոխ բառը «հոտած, ժահահոտ» իմաստն ունի (ՀԱԲ, I, 693): Աճառյանն տյս բառի համար վկայակոչում է նախ Անանիա Նարեկացուն, ապա՝ Օձնեցուն, մինչգեռ ժամանակային առումով հակառակն է սպասելի (ՀԱԲ, I, 693)՝ «... ի բաց տարեալ տրոհեսցի ի մէնջ այսպիսի դրէմխոխ և ապիրատ խորհրդոց առարկուածք» (193):

Թանձրադիտակ բառը «թանձրադետ, հոծ, թանձրամած» (ՀՕԵ, 307, ծան. 1) իմաստով է գործածվել. «Ձաստուածաբանութիւն աստուածածնելութեան Բանին Հօր ոչ ոմանք ստոյգ հաւատոց այժմ ստորոգեն զայն, որ ի հայրական ծոցոյ և ի թափանցիկ լուսոյ և ի գերազանցեալ փառացն ի թանձրադիտակ մարդկայինս բնութիւն ի խոնարհ թափեալ և քաղաքավարեալ յայտնեցաւ՝ պտղաբերել հեթանոսաց եկեղեցւոյ ...» (192): Բառը կազմված է բնիկ հայերեն թանձր արմատից (ՀԱԲ, II, 152) և դէտ՝ պահապանից (ՀԱԲ, I, 661) արմատից:

Ինքնարարբառ «ինքնին խոսող» նորակազմ ածականը (ՀՕԵ, 309, ծան. 37) ունի հետևյալ գործածությունը. «... որ յառաջ քան զարուեսեակն ըստ ինքնարարբառ Բանին, թէ ես լոյս յաշխարհ եկի» (194): Բառը կազմված է ինքն արմատից, որի ծագման վերաբերյալ հայ բանասիրության մեջ տրվում են բազմաթիվ մեկնաբանություններ (ՀԱԲ, II, 245), որոնցից է օրինակ ինքն+բն կազմությունը, որտեղ արմատական մասն է ք, և հայերեն բալ արմատից («խօսիլ, ասել»՝ բամ, բաս, բայ) (ՀԱԲ, I, 383):

Ծաղկանեաեալ «ծաղիկ տալով, ծաղկելով» (ՀՕԵ, 308, ծան. 21) բառն ունի հետևյալ գործածությունը. «... զի թերևս լրութիւն եկեղեցւոյ Քրիստոսի ըստ սրբոյ Հարցն աւանդից գերապայծառ և անշիջանելի փայլեսցէ, և ճշմարիտ հաւատոցն բարեմտութիւն ծաղկանեաեալ բողբոջեսցէ» (193): Բառը կազմված է ծաղիկ արմատից, որի ծագումը հայտնի չէ (ՀԱԲ, II, 439) և նետեալ բնիկ հայերեն արմատով բայից (ՀԱԲ, III, 442):

Հակասակ բառը «հակասող» (ՀՕԵ, 310, ծան. 60) նշանակությունը հանդես է եկել հետևյալ օրինակում. «... խաչեցա այլ որ կայր մեզ հակասակ եբարձ զայն ի միջոյ և բեռնաց ընդ խաչափայտն եզև վասն մեր անէծք» (197): Բառը կազմված է հակ- նախածանցից, ասել բայի աս արմատից (հնխ. ag՝ «ասել») (ՀԱԲ, I, 266) և -ակ վերջածանցից:

Հրաբորբ բառը «հրաբորբոք» իմաստն է արտահայտում (ՀՕԵ, 307, ծան. 15) հետևյալ օրինակում. «... կամ թէ պատճառս ինչ տրտնջման դտեալ և ևս առաւել զհրաբորբն բղխեն չարութիւն և աճեցուցեն զդժոխըմբեր զգացումնն» (192): Բառը կազմված է հուր (գործածական է նաև հուրբ՝ «կրակ») հնխ. puro (ՀԱԲ, III, 125) և բորբ (ՀԱԲ, I, 475) հնխ. bho-bhr-օ արմատներից:

Մահորոճ «մահ որոճացող, մահաբեր» իմաստով (ՀՕԵ, 308, ծան. 24) բառը հանդես է եկել հետևյալ օրինակում. «Զի միշտ հանդիսանան ստեղծանել յարել ի մեզ զչարահազադ մտածմանցն առարկութիւնս, որ ստորահոսեալն ի յանդուներս խաւարին տարտարոսին և զմահորոճն է զդեցեալ թիւնս» (193): Բառը կազմված է մահ՝ հնխ. mer «մեռնիլ» արմատից (ՀԱԲ,

III, 233) և որոճ չստուգաբանված արմատից (ՀԱԲ, III, 585), որ նշանակում է «ուլունքի նման մի խեցեմորթ, որ գետափներում է գտնվում», նաև բույսի անուն է:

Մարմնագրեստեալ բառը հանդես է եկել «մարմին առած, մարմնացած» նշանակությամբ (ՀՕԵ, 308, ծան. 35): ՆՀԲ-ն (II, 226–227) ունի միայն մարմնագրեստ ձևը՝ «... և այսպէս ստուգապէս մարմնագրեստեալ և մարդեղեալ՝ արար իւր ճանապարհ և դալստեան և յայտնութեան» (194): Բառը կազմված է մարմին «միս», փխբ.՝ «մարդ, նյութ, իր» բնիկ հայերեն արմատից (ՀԱԲ, III, 287) և գրեստ՝ գրեստ «հագնել» նույնպես բնիկ հայերեն արմատից (ՀԱԲ, II, 88):

Յախեալ բառը (արմատը՝ յախ, նշանակում է «փակված» (ՀՕԵ, 309, ծան. 36): Ունենք նաև հախծին բառը՝ «ստույգ, ժամանակին ծնունդ» նշանակությամբ: «Այսպէս ի կուսական յարգանդէ և յախեալ մօրէ, ծագեցաւ լոյս աշխարհ...» (194): Հախ արմատը հանդիպում է արդի հայերենի բարբառներում:

Յարեալ բառը «հարակցելով, հարելով» նշանակությամբ բառը (ՆՀԲ, 2, 346, ՀՕԵ, 308, ծան. 25) բնագրում հանգես է եկել հետևյալ օրինակում. «Ընդէ՛ր բընաւ ազատութիւնս մէր այսպէս դատիցի յայլոյ խղճի մտաց, որք անդուն բերանով ասեն զմէնջ ասել յարեալ բառ ի ձայնակցութեանց Մանես գոլ և Մարկոնի և Բարդեժանի և Եւաիքեա» (193): Բառը կազմված է բնիկ հայերեն յար «կից» արմատից (ՀԱԲ, III, 387)՝ աբար ածանցի բաղադրությամբ:

Յոգնահոս բառը «հոգնահոսան, հորդահոս, հորդառատ» նշանակությամբ (ՀՕԵ, 308, ծան. 18), հանդես է եկել հետևյալ օրինակում. «Այլ ընդդիմացուք նոցա ուղղափառ հաւատոց մարտիւ և սանձահարեալ հանգիսասցուք զխստերախ խարդաւանս հերձուածողութեան և վերջատանջել զյոգնահոս և զբազմատարած գիշերամածն խաւար (193): Բառը կազմված է յոգն «չատ, բազում» (ՀԱԲ, III, 402) հունական *οχαλος* արմատից և հոս դեռ չմեկնված (ՀԱԲ, III, 115) արմատից:

Նեստորաբար բառը «Նեստորի նման, Նեստորի հետևություն» նշանակությամբ (ՀՕԵ, 309, ծան. 52) հանգես է եկել հետևյալ օրինակում. «Եւ այնուհետև Նեստորաբար իմանի նոցա գնել գիմակս ընգդէմ երից սրբոց ժողովոցն ողջախոհ և միատարր խոստովանութեան» (195):

Նոյնացեալ (նոյնանամ) «նույնը լինել» (ՀՕԵ, 308, ծան. 34): Բնագրում այն հանդես է եկել հետևյալ օրինակում. «... այլ մի և զնոյն նոյնացեալ միով բնութեամբ և անբաժանելի Աստուածութեամբն, և միով պատուով երկրպագեալ» (194): Բառը կազմված է բնիկ հայերեն նոյն արմատից, որը ձևավորվել է նա դերանունից՝ ին մասնիկով (ՀԱԲ, III, 468):

Ոչ ստորաքննելով հարադրությունը «առանց խորը քննելու» իմաստն է արտահայտում (ՀՕԵ, 307, ծան. 8). «... և զեղեզումն մտաց զինչ կամութեան ի գործ արկեալ՝ վրիպումն գլորման ճաշակեն, ոչ ստորաքննելով զթաղուցեալն ի նմա գառնագոյն քան զլեղի մախանացն բոց, յորմէ յղացեալ ծնանի նոցա զանազան և զտարբեր հերետիկոսութիւնս» (192):

Ասոր բառի ծագումը հայտնի է (ՀԱԲ, IV, 278), իսկ քնին բառը (ՀԱԲ, IV, 583), որ նույնպես լիարժեք ձևով մեկնված է, հավանաբար ծագում է բնիկ հայերեն ին արմատից կամ քուն բառից (նույնպես հայարմատ):

Չարահազազ «չարսխոս», «չարածայն» (ՀՕԵ, 308, ծան. 23). տե՛ս մահորո՞՞ բառի համար բերված օրինակը): Բարգուժյունը ձևավորվել է չար և հազազ բառային միավորներից, որոնցից չար-ը գեռես չստուգաբանված արմատ է (ՀԱԲ, III, 625), իսկ հազազ «չունչ» բառում կրկնված է հազ պարզական արմատը, որն առանձին չի գործածվում (ՀԱԲ, III, 3):

Վայրազարկեցան բայը ՆՀԲ-ն չունի, ունի միայն ի վայր զարկանեմ ձևը. գործածվել է «գետնին զարկվեցին» նշանակությամբ (ՀՕԵ, 308, ծան. 28). «... նոքին իսկ են, որ ընդ ամբարշտութեանցն կռապաշտեալ վայրագարկեցան և ընկճեալ կործանեցան» (193): Բառը կազմված է անստույգ ծագումով վայր արմատից (ՀԱԲ, IV, 300), որի հիմնական նշանակությունն է «բացաստան», «բնակությունից դուրս եղած տեղ, դաշտ, չմշակված հող» և գարկ բնիկ հայերեն բառից (ՀԱԲ, II, 83), որը կազմված է գ մասնիկով հար պարզական արմատի կ-ով աճած հարկ ձևից:

Վերապայծառ «գերապայծառ» իմաստով (ՀՕԵ, 308, ծան. 32) բառը հանդես է եկել հետևյալ օրինակում. «... վասն զի Բանն Աստուած և Որդին ճշմարիտ, որ ի ճշմարտէ Հօրէ ծնեալ յառաջ քան զամենայն յաւիտեանս, և Բարձրեալ և ամենակալ և վերապայծառ լոյս՝ ըստ որում և ծնօղն» (194): Բարգուժյունը կազմված է վեր (ՀԱԲ, IV, 329)՝ հնի. uper արմատից և պայծառ չստուգաբանված արմատից (ՀԱԲ, IV, 17):

Վերջատանջեմ բայը «վերջին տանջանքը պատճառել, վերջնական հարված հասցնել» նշանակությամբ հանդես է եկել յոգնահոս բառի համար վերոնշված հատվածում: Բառը կազմված է վերջ անհայտ ծագումով արմատից (ՀԱԲ, IV, 332) և ասնջ «չարչարանք» պահլավական բառից (ՀՕԵ, 308, ծան. 17):

Տարասութիւնք «կեղծաւորություններ» (ՀՕԵ, 309, ծան. 46) բառը հանդես է եկել հետևյալ հատվածում. «Իսկ առ որում թագուցեալ է ճշմարտութիւնն առաջին և զօրացեալ այժմ ու մոլորութիւնս, որ զգրեալսրն ծածկեն և զինքնիմաց տարասութիւնս ասել հրամայեն, որ ոչ ունին զարժանն ի գէսլ առ նոսա բերի առաքելոյ բանն ...» (195): Բառը կազմված է պահլավական ծագումով տար արմատից (ՀԱԲ, IV, 381) և աս արմատից բազադրված -ութիւն ածանցով:

Տրամաբեր բառը «մտահոգիչ, տրամեցնող» նշանակությամբ է բնագրում հանդես եկել (ՀՕԵ, 307, ծան. 9) ոչ ստորաքննելով բառի օրինակում: Բառը բազադրված է տրտում հայակազմ բառից, որում կրկնված է հնիս. *drōm* – տրում (տուտում, տուրտում, տրտում) արմատը (ՀԱԲ, IV, 440) և բեր նույնպես հայերեն հնիս. *bher* (ՀԱԲ, I, 440) բառից:

Քերթողածաղիկ «երևելի գիտուն, ծաղիկ քերթողների մեջ» նշանակությամբ բառը (ՀՕԵ, 309, ծան. 49) հանդես է եկել հետևյալ հատվածում. «Եւ նախ քերթողածաղիկ փիլիսոփայից այս տեսցի, որք յաղագս բաժանման և ապացուցի սոցայցն տեսութեանց համառօտ ընձեռնութիւն առնելով փորձեցան և զդէմ ի բնութեան գոյ ասացին ենթակայացեալ ըստ մեծի պիտեցելոյ խոլզման և ըստ բոլոր յեղանակի ...» (195): Բառը

կազմված է քերթ բնիկ հայերեն առանձին անդործածական արմատից (ՀԱԲ, IV, 572)՝ քերթ աճական, և ծաղիկ արմատից:

Օրածին «նոր-նոր ծնված» նշանակութամբ (ՀՕԵ, 310, ծան. 64) բառը հանդես է եկել հետևյալ օրինակում. «Տեսանես, ասելով, զի աստուած և հզօր և անմահ և հայր հանդերձելոյ աշխարհին՝ զայս օրածին մանուկս անուանէ» (198): Բարդությունը կազմված է բնիկ հայերեն օր (հնիս.՝ *amor*) արմատից (ՀԱԲ, IV, 66) և ծին նույնպես հայերեն (հնիս. *g'en*) արմատից (ՀԱԲ, II, 457):

2. Այս կարգի բառային միավորներով հարուստ է նաև «Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի Սակս ժողովոց որ եղէն ի Հայք» աշխատությունը⁷, որում կան շուրջ 23 բառեր, որոնք չենք գտնում ՆՀԲ-ում: Այդ բառերն են՝ ամրապնդեալ, անխոստովանաբար, անյիշատակաբար, ապականաբնակ, առաքելաբարբառ, բիւրաբաշխ, բնաղիւր, երախայապէս, ընթերցարան, լայնապարիսպ, հաղարաւորեալ, համասփռական, հաստայատակ, հաստապատճառ, հրեշտակաքարոզ, ձեռնարկու լինիմ, ճառարանեմ, մարգարէափակ, մշտալցոյց, յարալուցեալ, սաասնայապատիր, ուղղակարգ, Քրիստոսաւետեալք⁸:

Ամրապնդեալ «ամրացված, հաստատված» (ՀՕԵ, 304, ծան. 25) նշանակութամբ բառն ունի հետևյալ կիրառությունը. «...եւ հնարեսցուք վկայս հաստապատճառս և բազմաբանս, բնաղիւր բաղդատութեամբ, եւ մարգարէափակ ամրապնդեալ գրեսցուք պատճէնս հաւատոյ յաւանդութիւն խոստովանութեան մերոյ ...» (484): Բառը կազմված է ամուր (ՀԱԲ, I, 161) չստուգաբանված արմատից և պինդ բնիկ հայերեն (հնիս.՝ *bhendh*) արմատից (ՀԱԲ, IV, 82):

Անխոստովանաբար «չխոստովանող՝ անզղջում ձևով» (ՀՕԵ, 305, ծան. 38) բառը հանդես է եկել հետևյալ օրինակում՝ «Քանզի նոքա անխտրապէս եւ անխոստովանաբար ոչ լեալ մաքուր, մերձենան յահաւոր խորհուրդն, իբրեւ ոչինչ համարելով ...» (487): Բառը կազմված է խոստովան առանձին անդործածական արմատից (պահլավերեն *xustavan* ձևից), (ՀԱԲ, II, 401)՝ ան- նախածանցի և -աբար վերջածանցի միջոցով:

Անյիշատակաբար «առանց հիշատակի՝ հիշատակման, անհիշատակ» (ՀՕԵ, 304, ծան. 29) բառը հանդես է եկել հետևյալ կիրառությամբ. «... առ ի խառնումն մոռանալ զխառնումն ապականութեան, անյիշատակաբար որոշեալ, եւ սեպհականեսցի կրօնս Հայոց, եւ կործանեսցի չար ազանդն նոցա» (485): Բառը կազմված է յիշատակ արմատից, որն ըստ Աճառյանի՝ պահլավական փոխառություն է (ՀԱԲ, III, 399)՝ բազադրված ան- և -աբար ածանցներով:

Ապականաբնակ նշանակում է «ապականության՝ պղծության մեջ բնակվող՝ գտնվող» (ՀՕԵ, 306, ծան. 61). բնաղբում հանդես է եկել հետևյալ կիրառությամբ. «Արդ ձեռնարկու լե՛ր, սիրելիդ Աստուծոյ, քաջդ յիմաստակս, եւ նախընտիրդ ի վարդապետս Հայոց, կարգիչդ Յունաց եւ դադարեցուցիչդ աղանդոյն Քաղկեդոնի, եւ կորուսի ապականաբնակ հերձուածոյն Նեստորի անիծելոյ. բռնահարեա՛ զկամացն Աստուծոյ իբրեւ հանդի-

⁷ «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 220-233:

⁸ Հմմտ. Հ ո վ հ ա ն ն ե ս Օ ձ ն ե ց ի. Երկեր, էջ 303-306:

սի նահատակ...» (492): Բարդությունը կազմված է ազական արմատից, որի ծագումը ստույգ չէ: ՆՀԲ-ում նշված է, որ այն կազմված է ապ+ակն եղանակով (ՀԱԲ, I, 457):

Առաքելաբարբառ նշանակում է «առաքյալների կողմից ասվող քարոզ-վող»։ Հանդես է եկել հետևյալ օրինակում. «Արդ այս առուր յարութեան ճաշակի գառն զենեալ, որ է նոր զատիկ աւետեաց յարութեան համասի-ռական, տիեզերատարած և լուսասփիւռ, հրեշտակաքարոզ եւ առաքելա-բարբառ պատմի աւետաբեր երրաւրեայ յարութիւնն» (488): Բառը կազմ-ված է առ- մասնիկով և քբ (ոտք) արմատով ձևավորված բառից (պարզա-կտն քբել «ուղարկել» բառը գործածվում է մինչ օրս՝ Զեյթունի բարբա-ռում) (ՀԱԲ, I, 256) և հայակազմ բարբառ արմատից (ՀԱԲ, I, 420):

Բիւրաբաշխ «շաա մեծ չափով բաշխող (ՀՕԵ, 306, ծան. 63) իմաստով բառը հանդես է եկել հետևյալ օրինակում. «...եւ ընդ միոյ սակաւուդ վարձս, ընկալցիս յԱստուծոյ մերմէ, բիւրապատիկ հազարաւորեալ, բիւրա-բաշխ և մշտալցոյց ...» (493): Բիւր բառը պահլավական փոխառութիւնն է (behar) (ՀԱԲ, I, 453), բաշխ ձևը նույնպես պահլավական ծագում ունի (baxs ձևից) (ՀԱԲ, I, 411): Վերոհիշյալ օրինակում դործածված է նաև բիւ-րապատիկ հազարաւորեալ «բյուր անդամ հազարապատկված, շատ, առա-վել չափով» հարադրութիւնը (ՀՕԵ, 304, ծան. 64): Բառը կազմված է հա-զար (hazar) պահլավերենից փոխառյալ բառի ածանցմամբ (ՀԱԲ, III, 5):

Բնադիւր «բնական և դյուրին, ի բնե դյուրին» (ՀՕԵ, 304, ծան. 23) բառը հանգես է եկել հետևյալ հատվածում՝ «Եւ արդ անապական հացիւն հրամայեմք կատարել զփրկագործ մեղսաքաւիչ խորհուրդն, եւ հիմնար-կեալ ճառս յօրինեսցուք, եւ հնարեսցուք վկայս հաստապատճառս և բազ-մաբանս, բնադիւր բազդատութեամբ, եւ մարգարէափակ ամրապնդեալ դրեսցուք պաածէնս հաւատոյ յաւանդութիւն խոստովանութեան մերոյ...» (484): Բառը կազմված է բուն օտար արմատից, որի ծագումը ստույգ չէ (ՀԱԲ, I, 483) և դիւր «հարթ տեղ» դիւրին «հեշտ» դարձյալ անհայտ ծա-գումով արմատից (ՀԱԲ, I, 671):

Երախայապէս «երեխայի նման, չմկրտված» (ՀՕԵ, 305, ծան. 35) բառը հանդես է եկել հետևյալ օրինակում. «...եւ մի՛ անմաքրապէս հպեալք մերձեսցին ի մարմինն Տեառն, ոչ խոստովանեալք զյանցանս անձանց իւ-րեանց, երախայապէս առեալ զմարմին որգւոյն Աստուծոյ հաղորդիցին անմաքուր, սատանայապատիր և որովայնամոլ ըստ քաղկեդոնական հա-ւատոյ...» (485-486): Բարդությունը կազմված է երախայ «անկնունք, չմկրտված» պահլավական ծագումով բառից (ՀԱԲ, II, 35) և պէս «իբր, նման, հանգոյն» պահլավական «pes» ձևից (ՀԱԲ, IV, 78): ՀԱԲ-ում կա ե-րախայապէս բառը, որի համար Աճառյանը վկայակոչում է Կանոնագիրքը:

Ընթերցարան բառը բնադրում դործածվել է «ընթերցելիք, սովորելու համար նախատեսված շարագրանք» (ՀՕԵ, ծան. 63) իմաստով. «...որպէսզի թարգմանեսցես զամենայն կարդ ընթերցարանիս մերոյ, մանաւանդ զխորհրդածութեան ընթերցուածսն չորից յարմատանցն...» (493): -արան ածանցով բազդարված այս բառի արմատն է ընթերց հայակազմ ընթեռ-նուլ բառից, որը ծագում է հնիւ. ter «կանչել» արմատից (ՀԱԲ, II, 126):

Լայնապարիսպ՝ «լայն պարիսպով պատված» (ՀՕԵ, 305, ծան. 33) նշանակությամբ բառն ունի հետևյալ կիրառությունը. «Եւ օրեայ աւուրբք ընդ պահս Սուրբ Պասեքին, անբաժանելի եւ անորիշ յօրինելով, ցանկ հաստատելով, եւ խորահիմն, հաստայատակ, լայնապարիսպ ամրափակեալ քառասնօրեայ պահօք, եւ օրեայ առաջաւորաւքն» (485): Բառը կազմված է լայն բնիկ հայերեն բառից, որի ծագումը գեուես որոշակի չէ (ՀԱԲ, II, 263) և պարիսպ սլաւոնական *parispa* «պատ» բառից (ՀԱԲ, IV, 62):

Համասփռական «ամենուրեք սփռված, համատարած» (ՀՕԵ, 305, ծան. 42) նշանակությամբ բառը գործածվել է հետևյալ օրինակում. «Արդ՝ այս աւուր յարութեան ճաշակի գառն զենեալ, որ է նոր զատիկ աւետեաց յարութեան համասփռական, տիեզերատարած և լուսասփիւռ, հրեշտակաքարոզ եւ առաքելաբարբառ պատմի աւետաբեր երրաւրեայ յարութիւնն» (488): Համ(ա)- և -ական ածանցներով բաղադրված այս բառի արմատն է հայերեն սփիւռ բառը, որը, ըստ Աճառյանի, կազմվել է ս սաստկականով և օտար ծագում ունեցող փոել (արմատը՝ փիւ) բառով (ՀԱԲ, IV, 17-19):

Հաստապատճառ բառը «հաստատուն պատճառ ունեցող» (ՀՕԵ, 304, ծան. 21) ունի հետևյալ կիրառությունը. «Եւ արգ անապական հացիւն հրամայեմք կատարել զփրկագործ մեղսաքաւիչ խորհուրդն, եւ հիմն արկեալ ճառս յօրինեսցուք, եւ հնարեսցուք վկայս հաստապատճառս և բազմաբանս...» (484): Հաստ արմատը բնիկ հայերեն է՝ «ամուր, հաստատուն» նշանակությամբ, որ ծագում է հնիւ. *pasto* բառից (ՀԱԲ, III, 49), իսկ պատճառ բառի ծագումն այնքան էլ հստակ չէ. Աճառյանը տալիս է մի քանի մեկնաբանություններ, ըստ որոնց բառը, հավանաբար, պարսկական ծագում ունի (ՀԱԲ, IV, 45): Այն կամ ծագում է *cara* «միջոց, ճարպ» բառից, կամ *badcar* «չարագործ» բառից, կամ ձևավորվել է պատ մասնիկով ճառ բառի հարակցությամբ:

Հաստայատակ «հատակը հաստատուն ամուր» (ՀՕԵ, 304, ծան. 32) բառը գործածվել է լայնապարիսպ բառի օրինակում: Բառը կազմված է հաստ արմատի և յատակ բնիկ հայերեն բառի բաղադրությունից: Վերջինս ծագում է հնիւ. *pedo* «ոտք» բառից (ՀԱԲ, III, 386):

Հրեշտակաքարոզ «հրեշտակների կողմից՝ բերանով քարոզվող» (ՀՕԵ, 305, ծան. 43) բառը տե՛ս Համասփռական-ի օրինակում: Բառը կազմված է հրեշտակ և քարոզ օտար ծագում ունեցող բառերից: Հրեշտակ-ը ծագում է պահլավական *frestak* «սուրհանդակ, պատգամատար» բառից (ՀԱԲ, III, 134), իսկ քարոզ-ը ասորական *karozā* «մունետիկ, սուրհանդակ» բառից է (ՀԱԲ, IV, 563):

Ձեռնարկու լինիմ հարադրությունը Օձնեցին գործածել է «ձեռնամուկս լինել, ձեռնարկել» իմաստով: «Արգ՝ ձեռնարկու լե՛ր, սիրելիդ Աստուծոյ, քաջդ յիմաստակս, եւ նախընտիրդ ի վարդապետս Հայոց, կարգիչդ Յունաց» (492): ՆՀԲ-ն չունի ձեռնարկու բառը: Ձեռն արմատը բնիկ հայերեն ծագում ունի (ՀԱԲ, III, 148), իսկ արկ արմատը փոխառվել է իրանական *harek* ձևից (ՀԱԲ, I, 320):

Ճառաբանեմ «ճառել, հանդիսավոր կերպով զիմել» նշանակությամբ բառը (ՀՕԵ, 304, ծան. 28) հանգես է եկել հետևյալ օրինակում. «...եւ ծածկեալ ի բաց կարոսցուք զքնութիւն խառնուածոյն ապականութեանց եւ

ճառարանեալ անապականաբար խօսեսցուք ընդդէմ այնոցիկ, առ ի մոռանալ զխառնումն ապականութեան» (485): Բառը կաղմված է ճառ չստուգաբանված արմատից (ՀԱԲ, III, 188) և բան բնիկ հայերեն (բալ) «խօսք» արմատից (ՀԱԲ, I, 403):

Մարգարէափակ «մարգարեներից փակված, սահմանված» իմաստով բառի գործածությունը տես՝ բնադիւր բառի օրինակում: Բառը կաղմված է մարգարէ պահպանված *margar* ձևից (ՀԱԲ, III, 276) և փակ չստուգաբանված (կան տարբեր մեկնաբանություններ) բառից (ՀԱԲ, IV, 470):

Մշտալցոյց «մշտապես լցնող՝ ավելացնող» (ՀՕԵ, 306, ծան. 66) իմաստով բառը գործածվել է բիւրապատիկ հաղարաւորեալ հարադրութեան համար բերված օրինակում: Բարդութիւնը կաղմված է միշտ իրանյան փոխառությունից (ՀԱԲ, III, 323) և լցոյց՝ լի բնիկ հայերեն արմատից՝ Հնխ. *pie* (ՀԱԲ, II, 278):

Յարալուցեալ «մշտավառ» նշանակութեամբ (ՀՕԵ, 305, ծան. 47) բառը հանդես է եկել բնագրի հետևյալ օրինակում. «... եւ տունկք աստուածածաղիկք, եւ ճրագունք յարալուցեալք, յորս Հոգին սուրբ հանապազ բուրէ ի նոսա» (489): Բառը կաղմված է յար արմատից և լոյց բնիկ հայերեն արմատից (ՀԱԲ, III, 296)՝ եւլ գերբայական վերջավորութեամբ:

Սատանայալատիր «սատանայից գերված» (ՀՕԵ, 305, ծան. 36) բառը գործածվել է երախայապէս բառի օրինակում: Կաղմված է սատանայ ասորական բառից (ՀԱԲ, IV, 179) և պատիր՝ «խաբէական»՝ պահպանված *patis* հոմանիչից առաջացած բառից (ՀԱԲ, IV, 42):

Ուղղակարգ «ուղղափառ, ուղղափառ հավատքով կարգված» (ՀՕԵ, 306, ծան. 55) բառը հանդես է եկել հետևյալ օրինակում՝ «... աղաղակելն է այս հաստատութեամբ սուրբ հաւատոյ, յրնգունելութիւն ուղղափառաց, ի պայծառութիւն ուղղակարգ եկեղեցւոյ, յրնգունելութիւն հաւատացելոց եւ ի գովութիւն բարեբանութեան համագոյ Երրորդութեանն՝ ամէն» (492): Ուղիղ բառի ծագումը ստույգ չէ (ՀԱԲ, IV, 546). նույնը վերաբերում է կարգ բառին (ՀԱԲ, II, 547):

Քրիստոսաւետեալք «Քրիստոսին ավետողներ» (ՀՕԵ, 305, ծան. 48) նշանակութեամբ բառը հանդես է եկել բնագրի հետևյալ օրինակում. «... զի այսուհետև ոչ եւս երախայացեալք, այլ քրիստոսաւետեալք, և աստուածաբարբառ կրթեալք յաւետաբեր քարոզութիւնն՝ աւրհնել զեկեայ փեսայն, ու առագաստի երգել երգս, եւ, յերգելն, աղաղակելն է այս...» (489): Բարդութիւնը ձևավորվել է Քրիստոս և աւետ(ել) արմատներից:

ՆՀԲ-ում չվկայված մեկ նորակազմություն կա «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» երկում⁹: Դա յօձնման բառն է (չարութիւն), որը պետք է լինի օձանման¹⁰. «... զոր հարիւր երեսուն և իններորդ սաղմոսն ուսուցանէ զչարչարանս փրկչին լինել, և յօձնման չարութիւն կատաղեալ ժողովրդեանն...» (95): Օձ բառը ծագում է Հնխ. *angwh* ձևից (ՀԱԲ, IV, 611), իսկ նման «հանգոյն, պես» բառը օտար ծագում ունի՝ առաջացած պահպանված *niman* ձևից (ՀԱԲ, III, 458):

⁹ Յ ո վ հ ա ն ն է ս Օ ձ ն ե ց ի. Մատենադրութիւնք, Վենետիկ, 1933, էջ 112–116 (այսուհետև էջերը կնշվեն տեքստում օրինակներին կից):

¹⁰ Տես՝ Ն ո վ հ ա ն ն ե ս Օ ձ ն ե ց ի. Երկեր, էջ 296, ծան. № 4:

«Յիշատակարանից» կարող ենք նշել միայն աստուածախօսունակ նորակազմությունը՝ «ընգունակ՝ ի վիճակի լինել խոսելու Աստուծու մասին» նշանակությամբ (ՆՀԲ, 1, 322, ՀՕԵ, 302, ծան. 22): Այն հանդես է եկել հետևյալ օրինակում. «... և թէ պարտ է սպասաւորաց բանին աստուածախօսունակ հարցն բանիւք կնքել բանիս» (116): Բառը կազմված է Աստուած բառից, իսկ անհայտ ծագումով արմատից (ՀԱԲ, II, 434) և ունի նրա «բռնել, առնել, ունենալ» արմատից (ՀԱԲ, III, 601)՝ բաղադրված -ակ վերջածանցով:

«Ընդդէմ պաղղիկեանց» երկում կա այս կարգի երկու բառ ի ձերբաձուլութենէ և անընդդէմամարտ:

Ի ձերբաձուլութենէ նախդրավոր հարադրությունը «ձեռքից ձեռք գցելուց» իմաստն ունի (ՆՀԲ, 2, 154, ՀՕԵ, 291, ծան. 37): Այն հանդես է եկել հետևյալ օրինակում. «Դոյնպէս և զասացեալ զառաջնածին կնոջ զմանուկն ի ձերբաձուլութենէ առ իրեարս չարամահ առնելով, զայն՝ յոյթ ձեռս ոգեսպառ եղեալ սատակի՝ յաղանդապետական կարգեալ պատուի մեծարեն» (38): Զիդ արմատը ստուգաբանված է (ՀԱԲ, III, 152):

Անընդդէմամարտ բառը «անընդդէմանալի, կովի դուրս գալու անընդունակ» (ՀՕԵ, 290, ծան. 25) նշանակությամբ հանդես է եկել հետևյալ օրինակում. «... զՁևս՝ վասն անընդդէմամարտ ներհակացն զուգախառնութեան զայլս վասն այլ իրիք քաջաբաստիկ զբնականսն ունելոյ որակուիս...» (37): Բառը կազմված է դէմ (ՀԱԲ, I, 660) արմատից և մարտ բնիկ հայերեն բառից (ՀԱԲ, III, 289):

«Ատենաբանութիւն» երկում ևս կան այս կարգի նորակազմություններ՝ դամպարունակ, ոտանաւորութիւն, բաբեղոնական և ներքսանկութիւն:

Դամպարունակ «լամպը, ջահը պահող, ջահընկալ» (ՀՕԵ, 260, ծան. 45) բառը հանդես է եկել հետևյալ օրինակում. «Եւ ընդ դիշերոյ շարալծեալս այս մերկանայ ի մէնջ զգալի յոյսս արեղական և լուսնի, ի բաց դնելով դղամպարունակ պայծառութիւն» (13): Բառը կազմված է դամպար (դամբար, լամպար) «ջահ, ճրագ, լույս» հունական *λαμπας* բառից (ՀԱԲ, III, 262) և ունի արմատից՝ -ակ վերջածանցով:

Ոտանաւորութիւն բառը «ոտքի վրա (կանգնած լինելը)» նշանակությամբ գործածվել է հետևյալ օրինակում. «Այլ և հանդերձ յոտանաւորութեամբ առանց ծունր կրկնելոյ կատարել զասացեալսս, ըստ նորին իսկ տեառն հրամանի...» (17): Բառը կազմված է ոտն արմատից (ՀԱԲ, III, 573)՝ -աւոր, -ութիւն ածանցներով:

Բաբեղոնական «բաբելական» (ՀՕԵ, 262, ծան. 69) բառը հանդես է եկել հետևյալ օրինակում. «...գերելով և ի հնոց արկանելով չարաչար, և կիզանող ախտիցն մատնեալ բաբեղոնական աներևոյթ գոռոզին» (18):

Ներքսանկութիւն բառը «ներս ընկնելը խցկվելը» (ՀՕԵ, 259, ծան. 29) նշանակությամբ հանդես է եկել հետևյալ օրինակում. «... իսկ զխանտացողն բարեվայելչականաց մերոց իրաց խնդացուցանելով զսատանայ, մանաւանդ թէ և եղագ ներքսանկութեան նմա՝ յանշորհակալուս բազմբախտութեան Աստուծոյ ներհորդեսցի» (11): Բառը կազմված է ներ բնիկ

հայերեն արմատից (ՀԱԲ, III, 443) և անկ (անկանիլ) հնիս.՝ *sn̄g* արմատից (ՀԱԲ, I, 197):

«Յաղայս կարգաց եկեղեցւոյ Քրիստոսի» ճառում խոնարհեցուցանող ձևը, որ ՆՀԲ-ն (1, 976) չունի իբրև գոյական (ՀՕԵ, 299, ծան. 3), գործածվել է հետևյալ օրինակում. «...սակայն ոչ լքանի յարարչական խնամոցն որ ի դրախտին. ամենևին արտաքս սահմանեալ զինքն ի բարձրութենէ խոնարհեցուցանողին գոչէ քաջալերաբար և ասէ...» (83): Բառը կազմված է խոնարհ չստուգաբանված արմատից (ՀԱԲ, II, 393):

«Ընդդէմ երևութականաց»¹¹ երկում գործածվել է այս կարգի չորս նորակազմութիւն՝ ղօղակատել, յահեկականացն, տնկադործող, խոնարհեցուցանող:

Ղօղակատել «խոռոսափել, պառակտել» (ՀՕԵ, 269, ծան. 51) նշանակութամբ բայը հանդես է եկել հետևյալ օրինակում. «Եւ զայդ այդպէս ղաւղակատելովդ՝ Արիոսի եղեալ գտանիս չարապաշտութեանն զուգաձայն» (69): Բառը կազմված է ղօղակ «լողակ, լողակ» և ատել «բաժանել, տրոհել, կիսել» բառերից (թշնամուց փախչող, լողացող) (ՀՕԵ, 269, ծան. 51): Աճառյանը բերում է հենց այս օրինակը և ավելացնում նաև բառի «ցնգաբանել, հայհոյել» իմաստները (ՀԱԲ, III, 172):

Յահեկականացն (ահեկականք) «ձախ կողմում եղած, ձախակողմյան» նշանակութամբ բառը հանդես է եկել հետևյալ օրինակում. «Եւ համայն հիացեալ եմ մեծապէս՝ զնորանշանդ ի քեզ տեսանելով ձևացութիւն զի այլք յահեկականացն զմի ինչ ի սատանայական ուսմանցն բարձեալ տարան շահս...» (79): Բառը կազմված է ահեկ-ահեակ չստուգաբանված արմատից (ՀԱԲ, I, 113):

Տնկադործող «արարչագործ» (ՀՕԵ, 282, ծան. 256) բայաձևը գործածվել է հետևյալ օրինակում. «...զի եթէ ոչ այս այսպէս աւելորդ վարկանիմ զամենապտուղն զայն տնկադործողին տնկեալ զդրախտն և ի նմա դնելով զմարդն՝ հրամայեալ անդուստ վայելել նմա» (83): Բառը կազմված է տունկ (ՀԱԲ, IV, 429) չստուգաբանված արմատից և դործ բնիկ հայերեն բառից՝ հնիս. *vorg* (ՀԱԲ, I, 583):

Այսպիսով՝ նշված նորակազմութիւնների մեծ մասը բարդ բառեր են, որոնցում օգտագործվել են և՛ բնիկ հայերեն, և՛ փոխառյալ արմատներ: Կան նաև ածանցավոր բառեր, որոնք կազմվել են հակ-, տար-, ան- նախածանցներով, -աբար, -ակ, -ութիւն, -ական վերջածանցներով: Կան նաև ի, ընդ նախդիրներով կազմված բառեր:

¹¹ Յ ո վ հ ա ն ն է ս Օ ձ ն ե ց ի. Մատենագրութիւնք, Վենետիկ, 1953, էջ 62–97:

НЕ ВОШЕДШИЕ В "НОВЫЙ СЛОВАРЬ АРМЯНСКОГО ЯЗЫКА"
СЛОВА, ИСПОЛЬЗОВАННЫЕ В ТРУДАХ ОВАННЕСА ОДЗНЕЦИ

ВАРСИК НЕРСИСЯН

Р е з ю м е

В трудах Ованнеса Одзнеци употреблен ряд неологизмов, которые не вошли в состав «Нового словаря армянского языка». Большая часть неологизмов сложносоставные, а остальные имеют аффиксальное происхождение. Для составления этих слов употреблялись и исконно армянские корни, и иноязычные.

WORDS USED IN THE WORKS BY HOVHANNES ODZNETSY AND NOT
INCLUDED IN THE "NEW ARMENIAN DICTIONARY"

VARSIK NERSISYAN

Summary

Many new word structures have been used in the works by Hovhannes Odznetsy which are not involved in the "New Armenian Dictionary". The major part of the new words have complex structures but the rest are suffixal. Both Armenian and foreign roots have been used in the word formations.